

ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ
ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Մ. ՆԱԶԻՆՅԱՆ

Հայ ժողովրդի հանճարեղ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ստեղծագործության համար ժողովրդական բանահյուսությունը հալատե սնուցող հող ու կենարար աղբյուր է եղել: Հարուստ ու բազմակողմանի են բանահյուսության հետ Թումանյանի ունեցած կապերն ու առնչությունները և հետաքրքրական ու կարևոր՝ բանահյուսության կշիռն ու նշանակությունը Թումանյանի գրական ժառանգության մեջ:

Պատահական չէ, որ այս հարցերն ու խնդիրները տարբեր առիթներով զբաղեցրել են մեր բանագետներին, թումանյանագետներին և ուրիշ հետազոտողներին¹:

Ոչ մի այլ հեղինակ մեզանում բանահյուսության իմաստն ու խորհուրդը այնպես խորիմաստ չի ըմբռնել և ծառայեցրել իր ստեղծագործական նպատակադրմանը, ինչպես այդ արել է Թումանյանը: Թումանյանի համար բանահյուսությունը եղել է մեծ ու բազմախորհուրդ մի աշխարհ՝ իր օրենքներով, հերոսներով ու անցքերով: Իր կյանքի ու ստեղծագործության բոլոր շրջաններում նա անխզելիորեն կապված է եղել բանահյուսական այդ աշխարհի հետ: Նրան հարազատ են եղել բանահյուսության բոլոր տեսակները՝ առասպելներից, ավանդություններից սկսած մինչև առած-ասուցվածքները, թեավոր խոսքերն ու ասույթները, ինչպես ազգային, այնպես և միջազգային, բոլոր ժողովուրդների ու ազգերի բանավոր ստեղծագործությունները: Ոչ մի այլ հեղինակի մոտ բանահյուսությունից վերցված թեմաներն ու մոտիվները այնպես ներդաշնակ չեն հնչում, ինչպես Թումանյանի ստեղծագործության մեջ: Մի առիթով բանավիճելիս Թումանյանը որոշակի նշել է. «Ես լիմ յեզենդներն էլ եմ ժողովրդից առել, բոլոր հեքիաթներն ու զրույցներն էլ եմ ժողովրդից ու ժողովրդականիցն առել, ու միշտ աշխատել եմ ու աշխատում եմ ինչքան կարելի է մոտիկ ու հարազատ մնալ. Սասունցի Դավիթը կազմելիս էլ եմ էդպես արել, նույնիսկ Անուշն էլ, Թմկաբերդն էլ, մյուսներն էլ, որտեղ քեֆս տվել է, օգտվել եմ ժողովրդական նյութերից...»²:

¹ Ա. Ղա ն ա լ ա ն յ ա ն, Ժողովրդական բանահյուսության տեղն ու դերը Թումանյանի ստեղծագործության մեջ, «Տեղեկագիր» ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի, 1943, № 3: Ն ու յ ն ի՝ Թումանյանը և ժողովրդական բանահյուսությունը, «Հ. Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ» 1964: Ա. Ի ն Ճ ի կ յ ա ն, Հ. Թումանյանի «Քաջ նազարը», «Տեղեկագիր» (պատմ. և գրակ. ինստիտուտի), գիրք I, 1938: Մ. Մ կ ը յ ա ն, Հ. Թումանյանի «Հազարան բլրով» պոեմը, Երևան, 1938: Г р и г о р я н К. Н., Ованес Туманян, М., 1952: է գ. Ջ ը ը ը ը ա շ յ ա ն, Թումանյանի պոեմները, Երևան, 1964: Լ. Հ ա խ վ ե ը դ յ ա ն, Թումանյանի աշխարհը, Երևան, 1966 և այլն:

² Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. IV, էջ 267:

Որտեղից է սկսվել և ի՞նչ ճանապարհով է Թումանյանը մերձեցել ու հոգեհարազատ դարձել ժողովրդական բանահյուսությանը: Բանասերները վկայակոչում են ավանդաշատ Լոռու հասարակական ու ընտանեկան միջավայրը, ուր ծնվել ու մեծացել է Թումանյանը: Այս պարագան բանաստեղծը միշտ էլ հպարտությամբ ու երախտագիտությամբ է հիշել: «...Ես լոռեցի եմ,— գրել է նա,— ու էն գլխից, ոչ «դիպվածով» սիրել և հետաքրքրվել եմ հեքիաթներով, լեգենդներով, առակներով, և շատերն անգիր դիտեմ դեռ մանկուց»³: Սա կարևոր նախադրյալ էր, բայց որոշիչ նշանակություն չէր ունենա, եթե Թումանյանը մնար միայն դրա շրջանակներում: Սակայն մեծ բանաստեղծը իր ապագա ուսումնառության, ավելի ճիշտ ինքնուսուցման եռանդուն ջանքերի շնորհիվ ավելի է խորացնում իր անմիջական ընկալումները, լսած ու տրպավորված բանահյուսական փաստերն ու իրողությունները: Նա ծանոթանում է և ուսումնասիրում հրապարակի վրա եղած ոչ միայն հայ, այլև ռուս, եվրոպական ու արևելյան այլ ժողովուրդների բանահյուսությունը, համաշխարհային գրականության ու մշակույթի տարբեր բնագավառների հետ ղուգրնթաց: Հարուստ գիտելիքներով զինված Թումանյանը ձեռնամուխ է լինում բանահավաքչական «սև» աշխատանքի, պատեհ առիթներով գրի առնելով հեքիաթներ, ավանդություններ, զրույցներ ու երգեր: Այդպես մինչև իր կյանքի վերջն էլ Թումանյանը բանահավաքի ջանասիրությամբ բաց չէր թողնում լսած ժողովրդական որևէ իմաստություն, առած ու ասույթ: Այս առումով ուշագրավ է մի փաստ: Հայտնի է, որ Թումանյանը ինքն անձամբ և ուրիշների միջոցով գրի է առել ու հավաքել «Հազարան բլբուլի» բաղմամբիվ տարբերակները⁴: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մեկնելով Հայաստանի զանազան գավառները (Ղարս, Իգդիր, Ալաշկերտ և այլն), ուր տեղի էին ունենում պատերազմական գործողությունները, Թումանյանը ծոցատետրում դեպքերի ամենօրյա իր գրառումների հետ պահպանել է նաև տեղացի մի բանասացից «Հազարան բլբուլի» մի նոր գրառում⁵: Այս առթիվ 1915 թ. Շիրվանզադեն (որ ուղեկցում էր Թումանյանին) իր մի հոգվածում հիշում է, թե ինչպես պատերազմի թոհուրոհի մեջ էլ Թումանյանը չէր մոռանում իր սիրած զբաղմունքը: Թումանյանը նամակներով ու բանավոր հորդորներով խրախուսում էր մտավորականներին հավաքելու ժողովրդական բանահյուսության նյութերը: Այդ նույն նպատակով «Գիքորի» 1909 թ. հրատարակության վերջին էջում տպագրված է հետևյալ հայտարարությունը. «Հեղինակը խնդրում է, ով որ մեր ժողովրդական հեքիաթներից գիտի, բարեհաճի գրի առնի էնպես, ինչպես որ կա, առանց փոփոխելու լեզուն ու բովանդակությունը, թեկուզ շատ անգամ բամբառակ, նրշանակի իր հասցեն և թե որտեղից է լսել, ուղարկի՝ Тифлис, Вознесенск. ул. 18, Об. Туманяну»:

Ժամանակի նշանավոր բանահավաք-հեքիաթագիր Տ. Նավասարդյանցի Նման Թումանյանն էլ մտահոգված էր բանավոր գրականության գանձերի անաղարտ գրառման և կորստից փրկելու հոգսով: Նրա այդ կոչերն ու հորդորները բավարար արդյունք են տալիս: Տարբեր գավառներից ու գյուղերից տարբեր զբաղմունքի տեր մարդիկ սիրով արձագանքում են մեծ բանաստեղծին՝ գրի են

³ Նույն տեղում, էջ 98:

⁴ Գրականության և արվեստի թանգարան, Թումանյանի ֆոնդ, № 10, Ե—ԺԸ:

⁵ Նույն տեղում, № 258, էջ 95—114:

առնում հեքիաթներ, առականեր, ավանդություններ, զրույցներ և ուղարկում նրան⁶:

Թումանյանի արխիվում պահպանվող նշումներն ու ծանոթությունները՝ տարբեր ժողովուրդների բանահյուսական նյութերի տարբերակների մասին, անձնական գրադարանի բանահյուսական գրքերի հավաքածուն և տարբեր առիթներով հրապարակած նրա հոդվածներն ու ելույթները ասպարեզ են հանում Թումանյանին՝ որպես հայ բանագիտության նշանավոր դեմքերից մեկը՝ իր արտակարգ էրուդիցիայով ու մտքի պայծառությամբ: Մեր ասածի համար լավագույն ապացույց կարող են ծառայել Թումանյանի խորիմաստ ու պատկերավոր դատողությունները տարբեր ժողովուրդների բանահյուսական ստեղծագործությունների միջև եղած ընդհանրությունների մասին, փոխադարձ ներթափանցումների և ընդհանրապես բանահյուսական նյութի ազդեցիկ պատկանելության հարցերի մասին: «Ինչպես էս կամ էն դարձվածքը, — գրել է Թումանյանը, — էնպես էլ անբողջ պատմությունները անց են կենում աշխարհից աշխարհ, և ամեն աշխարհում, ամեն արևի տակ, ամեն ժողովրդի բերանում առնում են մի ուրույն երանգ, համ ու հոտ: Եվ շատ անգամ նուրբ առանձնահատկություններն են, որ որոշում են մի ժողովրդի ստեղծագործությունը մյուսից, ոչ թե գործի ամբողջությունը: Հաճախ կհիասթափվեն էն մարդիկը, որոնք ուզում են էս կամ էն ժողովրդական ստեղծագործությունը՝ էպոսի, հեքիաթի, առակի և նման գործերի սկիզբն ու ծնունդը կապել բացառապես իրենց հայրենիքի ու պապերի հետ»⁷: «Ձէ որ ամենքն էլ ունեն նույն առակաները, — գրում է Թումանյանը մի այլ առիթով, — նույն ազոավներն իրենց պանիրներով, նույն խորամանկ աղվեսներն ու զայլերը, նույն թակարդները, նույն օձերն ու գլուղացիները, և այլն, և այլն»⁸: Թումանյանի արտահայտած կարծիքները և մտքերը այսօր էլ թարմ ու այժմեական են հնչում ժամանակակից բանագիտության համար:

Հավաքելով, ամբարելով ժողովրդական բանահյուսության գանձերը, բազմակողմանիորեն ուսումնասիրելով, համեմատելով, համագրելով դրանք, Թումանյանը նոր ուղիներ բացեց, բազմապիսի եղանակներ ու միջոցներ հայտնագործեց բանահյուսությունը գեղարվեստական գրականության մեջ օգտագործելու ասպարեզում:

Թումանյանի գրական ժառանգության մեջ բանահյուսության ներթափանցումը գրական կամ գեղարվեստական մշակում որակելիս այդ հասկացության տակ չի ընդգրկվում բանաստեղծի ստեղծագործական աշխատանքն իր ողջ խորությամբ ու բազմակողմանիությամբ: Ուշադիր քննելով բանահյուսության հետ առնչվող Թումանյանի երկերը, ակնառու են բանաստեղծի ստեղծագործական տարբեր նպատակադրումները, մշակման տարբեր սկզբունքներն ու ելակետերը: Մի դեպքում բանաստեղծը նպատակ է դրել ժողովրդական բանահյուսության այս կամ այն ժանրի երկերը (հեքիաթ, առակ, երգ) հղկել, պակաս կամ ավել չափով համառոտել, երբեմն միջամտել, որոշ հավելումներ մտցնել, լեզվական ու ոճական շտկումներ կատարել, այնուամենայնիվ մնալով

⁶ Երեք հարյուրից անցնող բանահյուսական այդ նյութերը պահվում են գրականության ու արվեստի թանգարանի Թումանյանի ֆոնդում՝ № 1566—1650:

⁷ «Թումանյանը քննադատ», Երևան, 1939, էջ 154:

⁸ Հ ո Վ հ. Թ ու մ ա ն յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 1V, էջ 268:

տվյալ երկրի կամ նրա մի քանի տարբերակների սյուժեի ու բովանդակության սահմաններում: Այս կարգի ստեղծագործություններ են Թումանյանի հեքիաթները, առակներից ու զրույցներից՝ «Գառնիկ ախպերը», «Անխելք մարդը», «Սուտասանը», «Չախ-չախ թագավորը», «Ոսկու կարասը», «Խոսող ձուկը», «Մուկիկի մահը», «Մոծական ու մրջյունը», «Հսպես չի մնա», թարգմանած ու փոխադրած հեքիաթներն ու այլ նյութերը, ժողովրդական երգերից ու մանկական խաղերից՝ «Կալի երգը», «Ճախարակը», «Կաքավի գովքը», «Աղվեսը», «Խնոցին», «Արտուտիկը», «Ճնճղուկները» և այլն: Այս և նման ստեղծագործությունները հարմար է կոչել գրական մշակումներ, որտեղ Թումանյանը ներդրել է գեղարվեստական իր հմտությունը, նուրբ ճաշակն ու ղգացողությունը:

Մյուս դեպքում, այնպիսի ստեղծագործություններում, ինչպիսիք են «Սառնցի Դավիթը», «Քաջ Նաղարը», «Հաղարան բլբուլը», «Թմկաբերդի առումը», «Չարի վերջը», «Լուսավորչի կանթեղը», «Փարվանան», «Մի կաթիլ մեղրը», «Շունն ու կատուն» և այլն, Թումանյանի համար բանահյուսությունը հենք է ծառայել կամ զրդապատճառ ու աղդակ եղել՝ ծաղումով ու էությունով ժողովրդական նոր երկեր վերստեղծելու և հրաշակերտելու համար: Բանահյուսությունից բխող և բանահյուսության վրա հիմնված Թումանյանի ամեն մի երկ նոր հնչեղություն, փայլ ու նպատակասլացություն է հաղորդում ինչպես բանահյուսությանը, նույնպես և ներդաշնակում ու հարստացնում է Թումանյանի ստեղծագործությունը:

Իր ժամանակին գտնվել են որոշ քննադատներ (Ռ. Դրամբջան, Ս. Հ.), որոնք հանդես են եկել Թումանյանի բանահյուսական մշակումների դեմ, համարելով դրանք բանագրություն: Թումանյանը իր երկու հոդվածներով («Ոչ-յրական ոչնչությունները քննադատ», 1909 թ. և «Հայոց դրամբջանիդմն ու ես», 1913 թ.) բանավեճի մեջ մտնելով՝ հայկական, ռուսական ու եվրոպական բանահյուսությունից ու գրականությունից բերած բաղմաթիվ օրինակներով հիմնավորապես ջախջախեց իր ախույաններին, ցույց տալով նրանց տգիտությունն ու ամբարտաւանությունը: Թումանյանը այդ հոդվածներում միաժամանակ փայլուն կերպով վեր հանեց բանահյուսությունից կատարվող դրական մշակումների առանձնահատկությունները: Նա գրել է. «...էն ժողովրդական հում նյութերի համար է, որ բանահավաքները դրում են— որտե՞ղ են լսել, ո՞վ է պատմողը, քանի՞ տարեկան է և այլն, և այլն, որովհետև էն արձանագրություն է, պրոտոկոլ է, և պարտավոր են նույնիսկ նրա սխալներն էլ էնպես գրի առնելու, ինչպես որ կան: Ի՞նչ մշակածի, գրական լեզվով պատմածի, փոփոխածի, զանազան վարիանտներից կաղմածի, չափական ձևի վերածածի վրա չպետք է էլ գրվի, նա արդեն ժողովրդական չի, թեև բնագիրը ժողովրդիցն է առնված: ...Բանահավաքն ուրիշ է, բանաստեղծն ուրիշ, մեկի գրածի պատասխանատուն ժողովուրդն է, մյուսինը— ինքը: ...Նրբ ասում են հեքիաթ, առակ, լեգենդ, ամեն մի գրականությունից տարրական հասկացողություն ունեցող մարդ, մինչև իսկ ռամիկը, գիտեն, որ էդ կնշանակի ընդհանուր ժողովրդական ստեղծագործություն, որ ամեն մարդ էլ կարող է նյութ առնել ու գրել, պատմելով, փոփոխելով, ավելացնելով ու պակասեցնելով, հեռանալով կամ մոտիկ մնալով»⁹:

Թումանյանը կարևոր դեր է հատկացնում գրականության մեջ ժողովրդական բանահյուսության նյութերի օգտագործմանը: «Սա է էն ուղիղ ճանապարհ-

⁹ Նույն տեղում, էջ 266—267:

հը, — դրում է մեծ բանաստեղծը, — որով հոսանք պետք է տալ, ներս բերել առողջ ժողովրդական ստեղծագործությունները և ուժեղ, հարուստ, կենդանի լեզուն»¹⁰:

Բանաստեղծի բանահյուսական մշակումների մեջ ծանրակշիռ տեղ են գրավում վիպական բանահյուսության այնպիսի սիրված տեսակները, ինչպիսիք են ավանդությունները, լեգենդները, առասպելական զրույցները և ժողովրդական վեպը՝ էպոսը: Հայտնի է, որ բանահյուսական հիշյալ տեսակները առավել սերտ ու անմիջականորեն են կապված ազգային ավանդույթներին և անդրադարձնում են ժողովրդի հնամենի հավատալիքները, սովորույթներն ու ծեսերը: Այդ պատճառով էլ բանահյուսական հիշյալ տեսակները ընդգծված ազգային երանգ ունեն ու պատմական բնավորություն: Թումանյանն իրավացիորեն գրել է այս առթիվ. «Ամեն մի ազգի բանաստեղծություն ժողովրդական լեգենդներով է, ազգային ոգու ստեղծագործություններով է զորանում ու ինքնուրույնության կնիք առնում, հաստատվում, առաջ գալիս, որպես մի ամբողջ ժողովրդի խոսք և դրանով էլ դառնում պատկառելի»¹¹: Նրա նամակներից ու գրություններից երևում է, թե ինչպիսի ջանասիրությամբ ու հետևողականությամբ է նա դրի առել ու հավաքել ազգային ավանդությունները, լեգենդները, առասպելներն ու զրույցները: Ձեռքի տակ ունենալով երբեմն գեղարվեստական ամբողջականությունից զուրկ, կցկտուր ավանդական բեկորներ, փաստադրական կարգի տեղեկություններ և տեղադրական ու ծագումնաբանական ստուգաբանություններ, Թումանյանը չոր ու ցամաք այդ նյութերի հիման վրա գեղարվեստական լիարյուն ստեղծագործություններ է հրապարակ հանել, որոնք գաղափարական հարուստ բովանդակությամբ ու գեղարվեստական խոսքի պատկերավորությամբ հայ դասական գրականության գոհարներից են:

«Թմկաբերդի առումը» հռչակավոր պոեմի համար Թումանյանը հենվել է Ե. Լալայանի կողմից Զավախքում գրի առած նույնանուն հետևյալ ավանդության վրա: «Թմկաբերդի քրգերը պատմեցին, որ մի ժամանակ Թմկաբերդում իշխում էր մի իշխան: Պարսից թագավորն եկել, երկար պաշարել է այս բերդը, սակայն չի կարողացել առնել: Իշխանի կինը սիրահարվել է պարսից շահին և ծածուկ առել նորա հաճությունը յուր հետ ամուսնանալու՝ եթե ինքը սպանե յուր ամուսնուն և բերդը հանձնե շահին: Եվ իբր նա սպանել է ամուսնուն, հարբեցրել է զորքին և բերդի բանալիները ուղարկել շահին: Շահն այսպիսով տիրել է և հարցրել է մատնիչ իշխանուհուն. «Ես եմ գեղեցիկ, թե ամուսինդ»: Եվ երբ սա պատասխանել է, թե ամուսինս գեղեցիկ էր՝ շահը հրամայել է կապել սորան ձիու ագիից և քարշ տալ մինչև մեռնելը, ասելով, թե «եթե ամուսինդ շահից գեղեցիկ էր՝ ինչո՞ւ սպանեցիր»¹²:

Ավանդության չոր փաստերին Թումանյանը շունչ ու ոգի է տվել, կերտելով իր հոյակապ պոեմը, ուր սահուն չափածոն սյուժետային կուռ կառուցվածքի հետ գործողության ասպարեզ է հանել անմոռաց ու գունեղ կերպարներ՝ «գինով ու կնոջ սիրով» ոգեշնչված ազնիվ ու հայրենասեր իշխան քաջ Թաթուլին, փառասիրությամբ արբած ու դավաճանական իր արարքը զղջացած Թմկա տիրուհուն, դաժան ու նենգ պարսից բռնակալ Նադիր շահին և այլն: Թուման-

¹⁰ Նույն տեղում, էջ 96:

¹¹ Նույն տեղում, էջ 147:

¹² Զավախքի բուրմունք, հավաքեց Ե. Լալայանց, Թիֆլիս, 1892, էջ 57:

յանի պոեմը տողորված է ժողովրդական խորունկ իմաստությամբ՝ մարդու անբիծ կոչման ու բարի գործի հավերժ կենդանության մասին.

Անգ եմ կենում... միայն անմահ
Գործն է խոսվում լավ ու վատ.
Ա՛խ, երանի՝ ո՛վ մարդ կրգա,
Ու մարդ կերթա անառատ¹³:

Այս կարգի ստեղծագործություններից են նաև «Աղավնու վանքը», «Թափավորն ու շարչին» բանաստեղծությունները, որոնց հիմքում նույնպես ընկած են ավանդական փոքրիկ զրույցներ և գրավոր մատենագրական ակնարկներ: Հիշյալ ստեղծագործություններում Թումանյանը պատմական որոշակի հանգամանքներ ու դեմքեր է ներկայացրել (Նադիր շահ, Լենկթեմուր, Շահ-Աբաս և այլն), դրանք մասնավորապես կապելով հայ ժողովրդի պատմական կյանքի օրհասական պահերի հետ:

Սիրո, անձնվիրության այսպես կոչված հավերժական թեմաների ու մոտիվների հետ են կապված Թումանյանի «Ախթամար», «Փարվանա», «Աղջկա սիրտը» և շատ ուրիշ լեգենդներն ու բալլադները, որոնց սկզբնաղբյուրները մեծ մասամբ ինքը՝ բանաստեղծն է հավաքել կամ քաղել արևելյան գրավոր աղբյուրներից:

Թումանյանի լեգենդների ու բալլադների մի խումբ կա, որոնք կենցաղային ու սոցիալական հարցեր են շոշափում: Գեղեցիկ պատկերներով ու ընդհանրացումներով հարուստ այդ ստեղծագործություններում բանաստեղծը զորավիգ է կանգնում հալածված և անօգնական մարդկանց ու արարածներին («Պողոս-Պետրոս», «Որբը», «Անիծած հարսը», «Հսկան», «Արտուտի երգը» և այլն):

Միայն Թումանյանի բանաստեղծական երևակայությունը կարող էր դեռևս 17 տարեկան հասակում կյանքի առօրեական մի երևույթի շուրջը եղած զրույցի հիման վրա ստեղծել «Շունն ու կատուն» լեգենդը, որը կենդանիների անմեղ փոխհարաբերության շրջանակից դուրս գալով, այլաբանաբար, խտացված ու պատկերավոր կերպով արտահայտում է մարդկանց կենցաղային հարաբերությունների իրական պատկերը:

Վիպական բանահյուսության ասպարեզում Թումանյանի գեղարվեստական մշակումների մեջ մեծագույն նվաճումներից մեկը նրա «Սասունցի Դավիթ» պոեմն է: Բանաստեղծը ստեղծագործական մեծ աշխատանք է կատարել «Սասունցի Դավիթի» վրա: Թեև էպոսի իր մշակումը հրապարակ դուրս եկավ 1902 թ., Թումանյանը, սակայն, մինչև իր կյանքի վերջն էլ հետաքրքրվում էր էպոսով: Նա բանագետի խորաթափանցությամբ ուսումնասիրել է միջազգային վիպերգությունը ու քաջ ծանոթ էր աշխարհի շատ ժողովուրդների էպոսներին: Պատահական չէ, որ նա թարգմանել ու փոխադրել է նաև ռուսական էպոսի (СЫТНИА) և սերբական էպոսի առանձին կտորներ¹⁴, ինչպես նաև Հյուսիսային Ամերիկայի հնդիկների վիպական երգերի վրա հիմնված Հ. Լոնգֆելլոյի «Հայավաթի երգից» հատվածներ¹⁵:

13 Հ ո Վ հ. Թ ու մ ա ն յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. 11, էջ 150:

14 Նույն տեղում, էջ 227—237, 243—257:

15 Նույն տեղում, էջ 215:

Թումանյանի մի շարք հոդվածներից ու նամակներից երևում է, որ նա խորապես ընկալել է էպոսի ժանրային առանձնահատկությունները: Մի առիթով նա գրել է. «...Ժողովուրդների էպոսներին մոտեցող մարդիկ պետք է լավ իմանան և միշտ հիշեն մի օրենք, որ ժողովրդական էպոսի համար ժամանակ ու տարածություն եթե կան, ապա կան հսկայական չափերով. և միջավայր էլ եթե կա, — էդ էլ ամենից առաջ ամբողջ մարդկային կյանքն է ու մարդկության պատմությունը»¹⁶: Անդրադառնալով հայկական էպոսին, Թումանյանը նշում է. «Հայկական էպոսը հայ ցեղի ապրած կյանքի ու հոգեկան կարողությունների հոյակապ գանձարանն ու իր մեծության անհերքելի վկայությունն է աշխարհքի առաջ: Դեռ չեն գտնված հայկական էպոսի բոլոր ճյուղերը, գտնվածն էլ քիչ է ուսումնասիրված և շատ մթին տեղեր ունի, որոնց լուսավորությունով զբաղվում են թե՛ մասնագետ բանասերներ, թե՛ սիրողներ»¹⁷: Պահպանվել է Թումանյանի սևագիր մի ուսումնասիրությունը նվիրված հայկական էպոսին¹⁸, որտեղ, չնայած մի շարք հնացած ու մերժելի տեսակետներին, Թումանյանը հայկական հին ու նոր բանահյուսության, Հին արևելքի ու եվրոպական ժողովուրդների բանահյուսական նյութերի համեմատական քննությամբ ուշագրավ դիտողություններ է անում:

Թումանյանը «Սասունցի Դավիթ» պոեմը կերտելիս ձեռքի տակ ունեցել է էպոսի մինչ այդ հրատարակված բազմաթիվ պատումներ՝ Գ. Սրվանձտյանցի գրի առած Մշո, Մ. Աբեղյանի՝ Մոկաց, Գ. Հովսեփյանի՝ Ապարանի տարբերակները, Ա. Աբեղյանի, Ե. Լալայանի, Ս. Հայկունու, Ս. Կանայանի և ուրիշների գրի առած ու հրապարակած այլ տարբերակներ: Նա ուշի-ուշով ուսումնասիրել է Սասնա ծռերի տարբերակները, բացահայտել ընդհանրություններն ու տարբերությունները և ըստ այդմ նախագծել գեղարվեստական մշակման իր ծրագիրը, ընդգրկման սահմաններն ու կատարել դրվագների ընտրություններ:

Թումանյանից առաջ և հետո շատ գրողներ են մեղանում ձեռնարկել «Սասունցի Դավիթ» էպոսի մշակմանը՝ օգտագործելով գրական տարբեր ժանրերի միջոցները¹⁹: Սակայն արդարությունը պահանջում է ասել, որ հայ գրականության մեջ Թումանյանի «Սասունցի Դավիթը» էպոսի գրական մշակումների շարքում ամենից կատարյալն է: Հաճախ, տարբեր առիթներով, բանաստեղծն ինքը շեշտել է, որ «Սասունցի Դավիթը» գրել է երեխաների համար, և որ նրա պատակ ունի ավելի ընդարձակ ծրագրով վերցնել ու մշակել: Պահպանվել է նույնիսկ մի հատված «Սասունցի Դավիթի» II մասից, որը այլ ոճով ու չափով է ստեղծված:

Թումանյանի «Սասունցի Դավիթի» կատարելությունը և օրինակելիությունը պայմանավորված է էպոսի գաղափարական բովանդակությանն ու գեղարվեստական ձևին հարադատ մնալով: Էպոսի բազմաթիվ տարբերակներից նա ընտրել է Դավիթի ճյուղը, որն առավել խորությամբ ու պայծառությամբ է անդրադարձնում էպոսի գաղափարական հիմնական գիծը՝ օտար զավթիչների դեմ

16 «Թումանյանը քննադատ», էջ 447:

17 Նույն տեղում, էջ 446:

18 Հ. Ուլհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ IV, էջ 357:

19 «Սասունցի Դավիթ» էպոսի գրական մշակումների մասին ավելի մանրամասնորեն տե՛ս Ա. Ս. Ա. ս. ա. տ. յ. ա. ն, «Սասունցի Դավիթ» էպոսի գրական մշակումները, «Սասունցի Դավիթ» (Նոբելյանական ժողովածու), Երևան, 1939:

հայ ժողովրդի մղած աղատագրական պայքարը: Նա որոշ հղկումներով ու ճրջ-
գրրություններով իր պոեմի մեջ հարադատորեն պահպանել է էպոսի տեղագրա-
կան-աշխարհագրական միջավայրը, գործող հերոսների կերպարները (Դավիթ,
Մսրա-Մելիք, Քեռի Թորոս, Ջենով Օհան և այլն), ժամանակի բարքերն ու սո-
վորույթները: Ճիշտ է, պոեմի լեզուն գրական-ժողովրդական հայերենն է, բայց
յուրահատուկ ձևով Թումանյանը կարողացել է արտահայտել նաև էպոսի հե-
րոսների լեզվամտածողության յուրահատկությունները: Նա մեծ վարպետու-
թյամբ ոտանավորի շափով ու ութմիկայով վերարտադրել է էպոսի գործողու-
թյունների թափն ու պաթոսը: էպոսի երգվող հատվածների համար բանաստեղ-
ծը ընտրել է քնարական արտահայտչական միջոցներ. իրենց համապատաս-
խան դրսևորումն են գտել նաև էպոսի գեղարվեստական մյուս առանձնահատ-
կությունները՝ կրկնություններ, շափազանցություններ, այլաբանություններ և
այլն: Բոլոր այդ միջոցներով ու եղանակներով Թումանյանի պոեմն արտահայ-
տում է վիպական ժամանակների, վիպական հերոսների ու վիպական հանգա-
մանքների կոլորիտը:

Թումանյանի պոեմում Դավիթը խաղաղության ու աշխատանքի պաշտ-
պանն է: Դա էլ հենց էպոսի հիմնական դադափարներից է: Դրանով էլ էպոսը
թարմ ու կենդանի է բոլոր ժամանակների համար:

Թումանյանի գրական մշակման նշանակությունը մեծ է մի այլ տեսակե-
տից ևս: Նրա «Սասունցի Դավիթն» էր, որ հայ ժողովրդական էպոսը տարա-
ծեց, մասսայականացրեց ու ճանաչեցրեց հայ ժողովրդի բոլոր խավերին, հայ-
աշխարհում ու դրանից դուրս հայկական բոլոր բնակավայրերում, թեև մինչ
այդ գոյություն ունեին էպոսի գրառումների տարբերակները: Իրավացի էր բա-
նաստեղծը, երբ զայրացած դրամբյանների տգիտության դեմ, գրում էր. «Մի
Սասունցի Դավիթ... քանի ժամանակ էր բանահավաքները Մոկաց մութը լեռ-
ներից բերել էին ձեր առաջը ձգել: Բացատրում էին ու հիանում: Սակայն ձեզ
համար ու ձեր երեխաների համար նա գոյություն չունեւ ու չկար»²⁰:

Վիպական բանահյուսության Թումանյանի մշակումների մեջ ամենատա-
րածված տեսակներից մեկը հեքիաթներն են, որ Թումանյանի գեղարվեստա-
կան արձակի անբաժան ու անփոխարինելի մասն են կազմում: Ինչպես վերը
նշեցինք, Թումանյանը հեքիաթների հսկայական նյութեր էր ամբարել թե՛ բա-
նավոր և թե՛ տպագիր աղբյուրներից, ինչպես հայկական, նույնպես և հարե-
վան ու այլ ժողովուրդների: Երբ խնդիրը վերաբերում էր հեքիաթների մշակ-
մանը, Թումանյանը խիստ բժախնդիր ու սկզբունքային էր: Ոչ բոլոր նյութերն
էր հավանում նա: Հեքիաթների մշակման առթիվ Դրամբյանի դեմ բանավիճե-
լիս նա մի շատ կարևոր ու սկզբունքային նշանակություն ունեցող միտք է
զարգացրել. «Դուք էնքան տգետ եք, չեք էլ իմանում, որ հեքիաթները գրական
մարդիկ չեն հորինում, այլ առնում են ժողովրդականը ու պատմում: Եվ շնորհ-
քը հենց պատմելու մեջն է, որ իմանան ինչը փոխեն, ինչը դուրս գցեն, ինչը
պահեն, ինչ լեզվով, ինչ ոճով ու ինչպես պատմեն, որ և գեղեցիկ դուրս գա և
ժողովրդականի համն ու հոտը չկորցնի»²¹: Հեքիաթների մշակման, նաև
թարգմանությունների ու փոխադրությունների մեջ Թումանյանի արվեստի

20 Հոսովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. IV, էջ 101:

21 Նույն տեղում, էջ 96:

գաղտնիքը հենց այդ պատմելու շնորհքն է, որը նկատվում է նաև նրա գեղար-
նվեստական արձակի մեջ: Առականերից Թումանյանը շափածո մշակումներ է կա-
տարել: Դրանցից ամենանշանավորներն են «Մի կաթիլ մեղրն» ու «Չարի
վերջը»: Առաջինի համար Թումանյանը օգտագործել է վարզան Այգեկցու անու-
նով հասած միջնադարյան մի առակը՝ «Կաթ մեղու պատճառ պատերազմի»²²
իր տարբերակով: Այստեղ էլ, ինչպես մի շարք լեզենդներում, Թումանյանը հիմ-
նովին վերակառուցել է միջնադարյան սկզբնաղբյուրը ու հարստացրել, ընդ-
գծել ու խորացրել առակի սոցիալական ընդհանրացնող ուժը: «Չարի վերջը»
առակի համար Թումանյանն ունեցել է բաղմաթիվ հայկական ու այլազգի ժո-
ղովրդական տարբերակներ (բանավոր ու տուրքիր աղբյուրներից քաղած):
Թումանյանը այս շափածո առակը հրապարակել է 1908 թ., բայց երկար ժա-
մանակ ղբաղվել է նրանով, վերամշակել նոր վարիանտներով և այլն: Թե ինչ-
պես առակը իր այլաբանությամբ կարող է արձագանքել հասարակական-քա-
ղաքական պայքարին, լավագույն օրինակ կարող է ծառայել Թումանյանի այս
առակի մի այլ տարբերակը՝ «Անբուն կկուն»²³:

Անդրադառնալով հեքիաթներին, նկատում ենք, որ Թումանյանը դրանք
բաժանել է երկու խմբի: Մի խումբը բուն հայկական ժողովրդական հեքիաթ-
ների մշակումներն են, մյուս խումբը՝ փոխադրություններն ու թարգմանու-
թյունները այլ ժողովուրդների հեքիաթներից: Հայկական հեքիաթներից Թու-
մանյանն ընտրել է առավելապես իրապատում՝ կենցաղային ու երգիծական
սյուժեներ, որոնք ավելի ցայտուն գծերով են անդրադարձնում հայկական մի-
ջավայրի առանձնահատկությունները («Տերն ու ծառան», «Բարեկենդան»,
«Անբան Հուռին», «Կիկոսի մահը» և այլն): Կան, անշուշտ, և հրաշապատում
սյուժեներ («Խոսող ձուկը», «Եղեմական ծաղիկը» և այլն): Կարևոր տեղ են
գրավում նաև մեծ վարպետությամբ պատմած մանկական հեքիաթները («Ծի-
տը», «Ուլիկը» և այլն):

Հեքիաթների միջոցով Թումանյանն արտահայտում է սոցիալական, բա-
րոյախոսական բաղմաթիվ կարևոր գաղափարներ ու մտքեր, որոնք հասարա-
կական-ճանաչողական ու դաստիարակչական արժեք ունեն ոչ միայն մանուկ
սերնդի, այլև բոլոր հասակի ու բոլոր խավերի մարդկանց համար: Թումանյանն
ինքը շատ լուրջ կարևորություն էր տալիս հեքիաթների հասարակական-ճանա-
չողական նշանակությանը և մեծ պատասխանատվությամբ մոտենում նրանց
մշակման գործին: Մի առիթով նա գրել է. «Հեքիաթի մասին ոչ միայն մեր
«երջանիկ» աշխարհում, ավելի լավ երկրներում դեռ պարզ հասկացողություն
չունեն: Կարծում են դա հեշտ ու հանաք բան է: Դա գրականության մեջ ամե-
նաբարձր արտահայտությունն է, ուր ամբողջը հավիտենական սիմվոլներ են»²⁴:
Անդրադառնալով հեքիաթների մշակմանը, Թումանյանը շարունակում է. «Կար-
ծում են, թե էն է՝ հենց անունը հեքիաթ է, վերջացավ... Կարծում են հեշտ
բան է հեքիաթ մշակելը: Գրիմները հազիվ մի քանի հեքիաթ ունենան մշա-
կած: Մնացածը ժողովրդական հեքիաթներ են, խառնած, աղավաղած ու փը-

22 Ն. Մ ա ո, Ժողովածոյք Առակաց Վարդանայ: Նիւթք ի պատմութիւն միջին դարուց դրպ-
րութեան հայերենի, մասն Բ, բնագիր, Ս. Պետերբուրգ, ՌՅԽԳ, էջ 298—299:

23 Այս առթիվ տե՛ս Ա. Ի ն ճ ի կ յ ա ն, «Անբուն կկուն» առակի անտիպ տարբերակը,
«Հ. Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ», էջ 46—59:

24 Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն, Երկերի ժողովածու, հատ. V, էջ 472:

չացրած: Իմ կարծիքով ես մի հեքիաթ եմ մշակել կարգին (գուցե չնչին պակասություններ ունենա, ով գիտի) և դա «Քաջ Նազարն» է: («Մի կաթիլ մեղրը» առակ է, թեև ուսաները վրան գրել են СКАЗКА): Եվ այժմ եթե ասում եմ «Հազարան բլբուլը» կտամ, որովհետև հավաքել եմ երկար տարիների ընթացքում նրա վաթսուհից ավելի վարիանտները»²⁵:

Թումանյանի խստապահանջությունն, իհարկե, չափից ավելի է. նա ունի բազմաթիվ այլ գողտրիկ հեքիաթներ, որոնք մեր դրականության զարդն են կազմում: Բայց և այնպես այդ երկու հեքիաթների առանձնացումը Թումանյանի կողմից իր պատճառներն ունի: Ինչպես «Սասունցի Դավիթը» պոեզիայում, այնպես էլ «Քաջ Նազարը» արձակում Թումանյանի բանահյուսական մշակումների գլուխ-գործոցն է: «Քաջ Նազարի» սյուժեն համաշխարհային լայն տարածում ունի: Այն Աարնե-Թումպսոնի հեքիաթների տիպերի ցանկում (կատալոգում) կրում է՝ Նրջանկություն (բախտ) դիպվածով (պատահականությամբ) անունը և թվագրված է № 1640—1674: Հայկական հեքիաթն իր ուրույն տեղն ունի հիշյալ սյուժեի հարյուրավոր տարբերակների մեջ: Պատահական չէ, որ «Քաջ Նազարի» սյուժեն գրավել է նաև մի շարք այլ հայ գրողների (Ավ. Իսահակյան, Դ. Դեմիրճյան, Համաստեղ և ուրիշներ):

Թումանյանը ձեռքի տակ ունեցել է բանավոր և տպագիր աղբյուրներից քաղած այդ հեքիաթի բազմաթիվ տարբերակներ (հայկական, կովկասյան և այլ ժողովուրդների): Նա հեքիաթի իր մշակման սյուժետային կմախքը վերցրել է Դ. Սրվանձտյանցի «Դժոխան» տարբերակից²⁶, համալրելով, փոփոխելով ըստ իր ըմբռնման ու ճաշակի, նկատի առնելով բոլոր նյութերը: Արդյունքը եղել է Թումանյանական հանճարի ուժով ճոխացված ժողովրդական հեքիաթի մի նոր, հետաքրքրական ու հարուստ գրական տարբերակ: Հեքիաթի «Քաջ Նազար» լայն ժողովրդականություն վայելող անվանումը բանաստեղծի ընտրածն ու հարմարեցրածն էր: Թումանյանին գրավել է ժողովրդական հեքիաթի սուր երգիծանքը: Նա հարազատ է մնացել ժողովրդական հեքիաթի ոգուն՝ Քաջ Նազարին ներկայացնելով որպես ձրիակեր, անբան ու պոռոտախոս: Հետաքրքրական է այն փաստը, որ բոլոր տարբերակների մեջ Նազարը տնից վնդվում է հենց այդ պատճառով: Ժողովուրդը չի հանդուրժում ֆիզիկապես առողջ մարդու անաշխատ կյանքը: Ձրիակեր Քաջ Նազարի բնավորության մեջ շաղկապված են շատ արատներ՝ վախկոտություն, ծուլություն, ապաշնորհություն, պարծենկոտություն: Թումանյանը հարազատորեն պահպանել է նաև ժողովրդական հեքիաթի դործողությունների զարգացման հիմքը՝ դիպվածը, հաջողակ պատահականությունը, որի շնորհիվ էլ Նազարը դառնում է թագավոր: Նազարի նման անբանին թագավորական ծիրանի հագցնելով՝ Թումանյանը հեքիաթի երգիծանքը հասցրել է իր նպատակին: Քաջ Նազարի հավաքական կերպարով պսակազերծ է արվում ինքնակալների և շահագործողների իսկական դեմքը:

Բոլորովին այլ բնույթ ունի Թումանյանի «Հազարան բլբուլը», որի մասին բանաստեղծը բազմիցս հայտնել է, թե հանդիսանալու է իր ստեղծագործությունների գլուխ-գործոցը: Դժբախտաբար, նրան չհաջողվեց իրականացնել իր

²⁵ Նույն տեղում:

²⁶ Դար. Ե. Սրվանձտյանցի երկասիրությունները, Ա. Համով-հոտով, Թիֆլիս, 1904, էջ 242—247:

երազանքը. «Հաղարան բլբուլից» մնացել են անավարտ մի քանի հատվածներ և սևագիր ֆրագմենտներ: «Հազարան բլբուլի» միջոցով Թումանյանը նպատակ ուներ ներկայացնելու գեղեցիկ ապագայի, ներդաշնակ հասարակության մասին իր բանաստեղծական իդեալը:

Վիպական բանահյուսությանը ղուգընթաց Թումանյանը օգտագործել է հայ քնարական բանահյուսության ստեղծագործությունները: Դրանք աշխատանքային երգեր են, բնության ու սիրո միջնադարյան երգեր, մանկական խաղերգեր և այլն: Այստեղ էլ նա հարադատ է մնացել ժողովրդական բանահյուսության նյութերի օգտագործման իր ուղեգրած սկզբունքներին՝ հարկ եղած դեպքում կրճատել, հավելում կատարել, շտկել ու հղկել: Օգտագործելով, օրինակ, «Ազգագրական հանդեսի» XI գրքում հրատարակված «Ճախարակի երգը», Թումանյանը 40 տողից թողել է ընդամենը 14 տող, ավելի նպատակասլաց ու տպավորիչ դարձնելով ժողովրդական երգը:

Թումանյանի տեղծագործության կապը ժողովրդական բանահյուսության հետ միայն գեղարվեստական մշակումներով չի սահմանափակվում: Բանաստեղծի բոլոր երկերն էլ ներթափանցված են ժողովրդական իմաստությամբ: Բացի այն բանից, որ բանաստեղծը իր այսպես կոչված ոչ բանահյուսական երկերում, ինչպես, օրինակ, «Անուշ», «Մարո», «Լոռեցի Սաքոն» պոեմներում, օգտագործում է բանահյուսական առանձին նմուշներ (ոլբի, վիճակի երգերի պատահիկները «Անուշում» և այլն), նրա բոլոր երկերը շնչում են ժողովրդական բանահյուսությամբ, ներծծված են ժողովրդական բանավեպի, ժողովրդական բառ ու բանի գունագեղ եղանակներով ու միջոցներով:

Թումանյանը բաղում թելերով անխղելիորեն կապված էր ժողովրդի հետ: Իր ողջ կյանքում, բովանդակ ստեղծագործությամբ նա շնչել ու ապրել է ժողովրդի հետ, խնդացել նրա ուրախություններով, ցավել նրա վշտերով, ոգեշնչվել նրա ապագայով: Ժողովրդի հետ ունեցած Թումանյանի ամուր կապի օղակներից մեկն էլ եղել է բանահյուսությունը: Բանահյուսությունը մեծապես օգնեց Թումանյանին ժողովրդի հոգեբանությունն ուսումնասիրելու գործում, դառնալով նրա ստեղծագործության ժողովրդայնության ու համադրային ճանաչման կարևորագույն գործոններից մեկը:

ВЕЛИКИЙ ПОЭТ И ФОЛЬКЛОР

А. М. НАЗИНЯН

(Р е з ю м е)

Творчество гениального поэта армянского народа Ованеса Туманяна разносторонне связано с фольклором. С раннего детства в родном Лори, богатом фольклорными традициями, он слышал и воспринял народные мифы, предания, сказки, пословицы, песни. Впоследствии, с первых и до последних дней своей литературной деятельности, Туманян собрал обширный материал армянского народного творчества.

В литературном наследии Туманяна большое место занимают художественные обработки разных жанров эпического фольклора: эпос, сказ-

ки, басни, предания, легенды и прочее («Давид Сасунский», «Храбрый Назар», «Конец зла», «Капля меда», «Взятие Тмкаберда», «Парвана», «Ахтамар», «Кот и пес» и др.). Общеизвестны также художественные обработки лирического фольклора, сделанные Туманяном: народные, трудовые, детские песни, средневековые народные песни и т. д.

Армянский фольклор своим богатым идейным содержанием и художественно-выразительными средствами является одним из основных источников народности творчества Туманяна.